մանրամասն պարզեց այն սկզբունքները, որոնք պէտք է հիմք կազմեն Թիւրքերի հետ կնքուելիք դաշնագրի։ Այդ սկզբունքներն են. հաշտութիւնը պէտք է լինի վերջնական, դաշնագիր կողմերի միջև պէտք է պահուեն 1914 թուի սահմանները, Արևելեան Անատոլիայի ժողովուրդներին — հայերին, ասորիներին, լազերին — պէտք է տրուի ինքնավարութիւն Թիւրքիայի վեհապետութեան ներքոյ։ Հայկական հարցի մասին Ռամիչվիլի ասաց. «Առաջին հարցը, որ կը կանգնի մեր պատուիրակութեան առջև և այժմ կանգնած է Անդրկ. Սէյմի առջև, Թիւրքահայաստանի բարեկարգութեան հարցն է։ Զպէտք է այստեղ երկար խօսենք, թէ այդ ժողովուրդը ինքնորոշման ի՞նչ իրաւունքներ ունի։ Ես կարծում եմ, որ այդ իրաւունքները ամրապնդած են հայ ժողովրդի մղած դարաւոր պայքարով այն ճնշումների դէմ, որոնց այդ ժողովուրդը ենթարկուած էր Թիւրքական կայսրութեան սահմաններում, և մենք պէտք է յայտարարենք, որ Թիւրքահայկական հարցը մի հարց է, որի լուծումով չահագրգռուած է ո՛չ միայն Թիւրքական կայսրութիւնը, այլ և անպայման ոչ պակաս չափով նաև անդրկովկասեան ժողովուրդները։ Զեզ յայտնի է, որ հայ ժողովրդի ամէն մի շարժում Թիւրքիայում լիովին արձագանք էր ստանում և արտասահմանում, և այստեղ, Անդրկովկասում։ Եւ այդ, քաղաքացի պատգամաւորնե՛ր Սէյմի, միանգամայն բնական է։ Արիւնակից եղբայրներ՝ այստեղ գտնուողները չէին կարող այս կամ այն ձևով չարտայայտուել Թիւրքիայի սահմաններում ապրող իրենց ցեղակիցների վիճակի մասին։ Այդ դեռ քիչ է. այդ հարցի ամէն մի խճողում Թիւրքիայում միշտ առաջ է բերել միջցեղային յարաբերութիւնների բարդացում այստեղ, Անդրկովկասում։ Արժէ յիշել այդ տեսակէտից մի փաստ. 1895 թուի ապրստամբութիւնը, որը այստեղ այս կամ այն ձևով արձագանգ գտաւ։ Մեկնելով այս դրութիւնից, բոլորովին բնական է, որ ի պաշտպանութիւն Թիւրքահայկական իրաւունքների դուրս է եկել ո՛չ թէ բռնապետական Ռուսաստանը, ո՛չ այն երկիրը, որը ինքն էլ ոչ պակաս չափով ճնշում էր հպատակ ժողովուրդներին, այլ ահա դուրս է գալիս ռամկավար մի երկիր և ռամկավար երկրի ներկայացուցիչը՝ Անդրկովկասեան Սէյմը։ Թիւրքական կայսրութեան շահերը թելադրում են լուծել մէկ անգամ ընդմիշտ այդ բարդ ու ցաւոտ հարցը։ Եւ մենք կարծում ենք, որ Թիւրքիայում էլ կան հասուն պետական գործիչներ — մենք կուզէինք, խիստ կուզէինք հաւատալ, որ կան — որոնք իրենք հէնց միջոցներ ձեռք կառնեն, որ մէկ անգամ ընդմիշտ լուծուի հայ ազգաբնակութեան և Թիւրքական կայսրութեան միջև մշտական կուսխնձոր եղող այդ հարցը։ Եւ մենք կարծում ենք, համաձայն Դաշնակցութեան յայտարարութեան, որ եթէ այդ հարցը լուծուի, բախումները մէկ անգամ ընդմիշտ կը սպառուեն և կը վերջանան»։

Եւ Սէյմի Ֆրակցիաների ներկայացուցիչների արտայայտելուց յետոյ, միաձայնութեամբ ընդունուեցին հետեւեալ «հիմնական պայմանները».

«1. Ստեղծուած պայմաններում Անդրկ. Սէյմը իրեն համարում է իրաւատէր՝ կնքելու հաշտութիւն Թիւրքիայի հետ։

2. Սկսելով հաշտութեան բանակցութիւնները՝ Անդրկ. Սէյմը նպատակ է դնում կնքել Թիւրքիայի հետ հիմնական հաշտութիւն։

3. Կնքուելիք հաշտութեան դաշնագրին իբրև հիմք պէտք է դրուի 1914 թուին, պատերազմի յայտարարութեան վայրկեանին, Ռուսաստանի և Թիւրքիայի միջև գոյութիւն ունեցող պետական սահմանների վերականգնումը։

4. Պատուիրակութիւնը ջանալու է ձեռք բերել Արեւելեան Անատոլիայի ժողովուրդների համար ինքնորոշման իրաւունք և, ի մասնաւորի, Թիւրքա-